# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2023/Հ-20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | կոստյումներ | Ծանոթություն- տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | Ծանոթություն- տվյալ ապրանքը մակնիշ չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | Բաճկոնը <<Ռիպ-Ստոպ>> տեսակի գունաքողարկող կտորից, առնվազն 35% բամբակ, 65% պոլիէսթեր, քաշը 1 մ2 195 գ: Աստառը՝ մուգ փիրուզագույն: Արտադրվում է 46 մինչև 62 չափսի: Կենտրոնում տեղադրված սև գույնի պլաստմասե շղթայով, մեկ առանձին կտորից գոտեմասով: Թևքերի թեզանիքը կոճկվում է 2 կոճակով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված գրպաններ: Կրծքամասում արտաքին ծևավոր կափույրով, կոճակով կոճկվող գրպաններով: Բաճկոնի օձիքը հետ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ծալվող, մշակվում է 1 կտորից: Բաճկոնի կողային մասերը ունի 12 – 18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է <<ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> կամ (ՆԳՆ) մակագրությամբ կտոր, թիկունքին <<POLICE>> մակագրությամբ կտոր: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան՝ բաղկացած է 2 մասից, գունավոր գործվածքե կտորից, կողային մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Ուսադիրները գունաքողարկվող կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:: Ձախ գրպանի վերևի մասում 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Տաբատը – գունաքողարկվող կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կոճակներով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Կեպին - գունաքողարկվող կտորից, բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Հետևամասում առաձգական ժապավեն կտորով մշակված: Աստառը՝ բամբակյա կտորից: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է փոքր մետաղական գլխարկանշան՝ ՀՀ ոստիկանության զինանշանի տեսքով: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2023/Հ-20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |